Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1. հավաքագրել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգում, դատավորների, դատախազների, քննիչների և պետական այլ պաշտոններում նշանակման ենթակա անձանց գույքային դրության, եկամուտների, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության համար անհրաժեշտ տեղեկությունները, դրանց արդյունքների հիման վրա կազմել վերլուծական հաշվետվություններ ու ներկայացնել վարչության պետին.
2. մշակել դատավորների, դատախազների, քննիչների և պետական այլ պաշտոններում նշանակման ենթակա անձանց գույքային դրության, եկամուտների, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության ստուգման մեթոդաբանությունը.
3. ստուգել դատավորների, դատախազների, քննիչների և պետական այլ պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության հարցաթերթիկները՝ գույքային դրության, եկամուտների, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության մասով.
4. մշակել և կազմել դատավորների, դատախազների, քննիչների և պետական այլ պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության եզրակացությունները.
5. կազմել և վարչության պետի հաստատմանը ներկայացնել դատավորների, դատախազների, քննիչների և պետական այլ պաշտոններում նշանակման ենթակա անձանց գույքային դրության, եկամուտների, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության ստուգման պլանը.
6. կազմել դատավորների, դատախազների, քննիչների և պետական այլ պաշտոններում նշանակման ենթակա անձանց գույքային դրության, եկամուտների քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության ենթարկելու եզրակացությունները՝ սեփական ստորագրությամբ.
7. առերևույթ խախտումների դեպքում Վարույթների և իրավական ապահովման վարչության հետ նախապատրաստել արձանագրություններ/սեփական ստորագրությամբ/ ու ներկայացնել վարչության պետի հաստատմանը.
8. ուսումնասիրել դատավորների, դատախազների, քննիչների և պետական այլ պաշտոններում նշանակման շուրջ առկա ներպետական և միջազգային պրակտիկան.
9. մշակել մանրամասն արձանագրություն առկա բացերի, մարտահրավերների ու լավագույն փորձի վերաբերյալ, դրանց հիման վրա կազմել եզրակացություններ, առաջարկություններ, օրենսդրական առաջարկներ և ներկայացնել վարչության պետին.
10. խորհրդատվություն տրամադրել դատավորներին, դատախազներին, քննիչներին և պետական այլ պաշտոններում նշանակված հանրային ծառայողներին գույքային

դրության, եկամուտների, քրեական, կարգապահական, վարչական պատասխանատվության վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու հարցում,

11. իրականացնում է պետական պաշտոններում նշանակվել հավակնող թեկնածուների, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների հայտարարագրերի ստուգում և վերլուծություն՝ նախանշված հաճախականությամբ և սկզբունքներով, ինչպես նաև հայտարարագրերի ռիսկերի գնահատման, բացահայտման և մասնագիտական վերլուծության իրականացումը՝ հնարավոր անհամապատասխանությունները բացահայտելու և վերհանելու նպատակով.
12. պետական պաշտոններում նշանակվել հավակնող թեկնածուների, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների գույքային/ֆինանսական դրության վերաբերյալ բազմակողմանի վերլուծություն և ստուգում:

Փորձագետներ ներգրավելու ժամկետը՝ մինչև վեց ամիս:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 256 623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:

Փորձագետների պարտականությունները՝

1. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
3. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետներին ներկայացվող պահանջները՝

1) Բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն կամ տնտեսագիտություն կամ ֆինանսներ մասնագիտությամբ.
2) Իրավագիտության կամ տնտեսագիտության կամ ֆինանսների բնագավառի առնվազն մեկ տարվա ստաժ.
3) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, հատկապես Ms. Excel և Ms. Word փաթեթների լավ իմացություն
4) Անգլերեն և ռուսերեն լեզուների լավ և ազատ տիրապետում.
5) Իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ:

Դիմելու Ընթացակարգը՝

Դիմող ՀՀ քաղաքացիները hr.cpcarmenia@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին **պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով (**դիմումի ձևը կցվում է**).
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրական.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (**հայտարարության ձևը կցվում է**):

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն /անհրաժեշտության դեպքում հարցազրույց/:

*Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 10 հոկտեմբերի 2022թ.

**Փաստաթղթերն ընդունվում են միայն էլեկտրոնային տարբերակով միայն աշխատանքային օրերին՝ ժամը 10.00-ից մինչև 18.00-ն:*

Մանրամասների համար՝

Ուղարկել նամակ hr.cpcarmenia@gmail.com

հեռ.՝012 77 77 24

աշխատանքի վայրը՝ Երևան, Կենտրոն, Կորյունի 15

http://cpcarmenia.am/hy/

https://www.facebook.com/profile.php?id=100068554087037